ՄԵԾ ՀԱՂԹԱՆԱԿԻ 20 ՏԱՐԻ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԵԾ ՍԽՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

ՅԱ. Ն. ԶԱՐՈԲՅԱՆ

Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի առաջին քարտուղար

1965 թ. մայիսի 9-ին սովետական ժողովուրդը և ողջ առաջադեմ մարդկությունը հանդիսավորությամբ նշեցին հաղթանակի օրը։ Քսան տարի է բաժանում մեզ պատմության մեծ իրադարձությունից՝ Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից, Սովետական Միության և հանահիտլերյան կոալիցիայի երկրների կողմից ֆաշիստական Գերմանիայի և միլիտարիստական Ճապոնիայի ջախջախումից։

Քսան տարի է անցել այն օրվանից, ինչ լռել են հրանոթային համազարկները ու շարժիչների հանդյունը, ինչ նստել է փոշին ռազմի ճամփաներում։ Ժամանակը արդեն հարթել է խրամատները, բայց նա երբեք չի կարող սերունդների հիշողությունից ջնջել սովետական ժողովրդի մեծ սխրագործությունը Հայրենական պատերազմում։ Ողջ աշխարհը տեսավ, թե ինչի է ընդունակ սովետական հայրենասիրության և պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակված այն ժողովուրդը, որը լենինյան պարտիայի ղեկավարությամբ կառուցել է սոցիալիստական հասարակարգ։

Երախտապարտ մարդկությունը երբեք չի մոռանա ահեղ թշնամու՝ ֆաշիստական Գերմանիայի դեմ պատմական մեծ հաղթանակ տարած սովետական մարդկանց մարտական և աշխատանքային սխրագործությունը։ Դա նոր աշխարհի հաղթանակն էր հնի նկատմամբ, սոցիալիստական հասարակական և պետական կարգի հաղթանակը՝ կապիտալիստականի նկատմամբ, սովետական ժողովուրդների լենինյան բարեկամության, կոմունիստական պարտիայի և սովետական ժողովրդի գործերում մարմնավորված մարքսիզմ-լենինիզմի սկզբունքների հաղթանակը։

Վեց տարի մոլեգնում էր երկրորդ համաշխարհային պատերազմը, որը ծնունդ էր առել իմպերիալիզմի հրեշավոր սիստեմից։ Իր չափերով այս պա-

տերազմը նմանը չի ունեցել մարդկության ողջ պատմության ընթացքում։ Նրա մեջ էին ներքաշվել 61 երկրների ժողովուրդներ։ Պատերազմող երկրների բանակներն էին զորակոչվել շուրջ 110 միլիոն զինվոր ու սպա։

Համաշխարհային երկրորդ պատերազմը վիթխարի մարդկային զոհերի ու նյութական միջոցների կորստի պատճառ դարձավ։ Զոհվածների ընդհանուր թիվը կազմեց շուրջ 50 միլիոն մարդ՝ 5 անդամ ավելի, քան առաջին համաշխարհային պատերազմում։ Յուրաքանչյուր ռազմաճակատային օր տանում էր միջին հաշվով 23 հազար մարդկային կյանք։

Համաշխարհային երկրորդ պատերազմի բաղկացուցիչ մասը և վճռական իրադարձությունն էր Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմը հիտլերյան Գերմանիայի դեմ։ 1418 օր ու գիշեր մեր ժողովուրդն ու նրա զինված ուժերը կատաղի պայքար էին մղում ֆաշիստական ագրեսորների դեմ։ Այս պայքարի ընթացքում հսկայական ջանքերի ու զոհերի, դժվարագույն փորձությունների ու չտեսնված զրկանքների գնով սովետական մարդիկ ապահովեցին հաղթանակը, պաշտպանեցին Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիայի նվաճումները, մեր հայրենիքի ազատությունն ու անկախությունը և պատվով կատարելով իրենց ինտերնացիոնալ պարտքը բոլոր երկրների աշխատավորների հանդեպ, օգնեցին Եվրոպայի ժողովուրդներին թոթափել հիտլերյան լուծը, փրկեցին մարդկությունը ֆաշիստական ստրկացման վտանգից։

Մեր երկրի ժողովուրդները հաղթանակի զոհասեղանին դրեցին իրենց 20 միլիոն որդիների և դուստրերի կյանքը։ Աշխարհում ապրող ոչ մի ազնիվ մարդ երբեք չի մոռանա մեր ժողովրդի անմահ սխրագործությունը Հայրենական պատերազմում։ Սովետական մարդիկ գլուխ են խոնարհում զոհվածների հիշատակի առաջ։

* * *

Ֆաշիստական Գերմանիայի պարագլուխները նպատակ ունեին հասնել համաշխարհային տիրապետության։ Բայց նրանք հասկանում էին, որ դա անհնարին է, քանի դեռ գոյություն ունի Սովետական Միությունը։ Եվ այն բանից հետո, երբ նրանց ձեռքն ընկան ամբողջ Արևմտյան Եվրոպան, նրա նյութական ու մարդկային ռեսուրսները, իրենց հզոր ռազմական մեքենան նրանք ուղղեցին Սովետական Միության դեմ։

1941 թ. հունիսի 22-ին, լուսաբացին, ֆաշիստական հորդաները ուխտադրժորեն, առանց պատերազմ հայտարարելու ներխուժեցին մեր երկրի սահմանները։ Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը՝ ամենադաժանը և ամենածանրը բոլոր պատերազմներից, որ երբևէ վարել էր մեր հայրենիքը։ Մեր երկրի գլխին կախվեց մահացու վտանգ։

Ֆաշիստական զավթիչները, Արևմտյան Եվրոպայի երկրների դեմ տարած հեշտ հաղթանակներից ոգեշնչված, կարծում էին, թե իրենց հասցրած առաջին իսկ հարվածները կհանգեցնեն մեր պետության մասնատմանը։ Բայց նրանք չարաչար սխալվեցին։ Նանր փորձությունները, որոնք չէր կարողանա հաղթահարել աշխարհում ոչ մի այլ պետություն, պատերազմի առաջին շրջանի անհաջողությունները չսասանեցին մեր ժողովրդի կայունությունը, չթուլացրին նրա հավատը հաղթանակի նկատմամբ։

Հիտլերյան Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը Սովետական Միության վրա նպաստավոր պայմաններ ստեղծեց գերմանա-ֆաշիստական բանակի և աննպաստ պայմաններ՝ սովետական զորքերի համար։ Պատերազմի սկզբնական շրջանում կարմիր բանակը անհաջողություններ էր կրում։ Շոշափելի հարվածներ հասցնելով հակառակորդին, նա, այնուամենայնիվ, հարկադրված էր մարտեր մղելով նահանջել դեպի երկրի խորքը։

Ֆաշիստները վճռական հակահարվածի հանդիպեցին ոչ միայն ռազմաճակատում, այլև իրենց թիկունքում, ուր խիզախորեն գործում էին սովետական փառապանծ պարտիզանները, որոնք զգալի վնասներ էին հասցնում հիտլերականներին։ Գերմանական ռազմական մեքենայի անպարտելիության մասին առասպելը առաջին անգամ հօդս ցնդեց 1941 թ. ձմռանը, Մոսկվայի տակ մղված ճակատամարտում։ Այդ մարտում կարմիր բանակը գլխովին ջարդեց հակառակորդի հարվածային խմբավորումները և ետ շպրտեց նրանց Մոսկվայից։ Ջախջախվեց թշնամու 38 ընտիր դիվիզիա։

Հիտլերյան ռազմական մեքենային սովետական ժողովուրդը հակադրեց իր հավատը դեպի մեր գործի արդարությունն ու անպարտելիությունը, գաղափարական համոզվածությունը, կայունությունն ու անվախությունը վտանգի հանդեպ, հաղթանակի աննկուն կամքն ու սովետական մարդկանց մասսայական հերոսությունը, որը տասնապատկվել էր վրա հասած պատմական պահի պատասխանատվության գիտակցությամբ։ «Մեծ է Ռուսաստանը, բայց նահանջելու տեղ չկա, ետևում Մոսկվան է»,—գվարդիական-պանֆիլովականների այս խոսքերը, որ ոսկե տառերով արձանագրված են պատերազմի տարեգրության մեջ, այդ օրերին կրկնվել են անթիվ անգամներ, հազարավոր զինվորների ու սպաների շուրթերին։

1942 թ. վիթխարի մարտերում սովետական ռազմիկները դիմացան այնպիսի ճնշման, ինչպիսին չի կրել իր վրա աշխարհում և ոչ մի բանակ։ Հակառակորդն անգամ ապշած էր Ստալինգրադի պաշտպանների կայունությունից ու արիությունից։ Մի սպանված հիտլերականի մոտ գտնված նամակում տեղինակը դառնությամբ խոստովանում էր. «Մինչև Վոլգան մեզ մնում է անցնել ևս մեկ կիլոմետր, բայց մենք չենք կարողանում անցնել այն։ Այդ կիլոմետրի համար մենք պայքարում ենք ավելի երկար, քան ողջ Ֆրանսիայի համար»։

Այդ նույն օրերին սովետական զինվորները հերոսաբար մարտնչում էին դեպի Կովկաս խուժող հակառակորդի հրոսակների դեմ։ Դաժան և ոխակալ թշնամին կանգնած էր Անդրկովկասի եղբայրական ռեսպուբլիկաների՝ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի շեմքին։ Եվ եթե ֆաշիստական ոտքը չկոխկրտեց Անդրկովկասի չքնաղ, արևաշող հողերը, ապա դրա համար մենք բոլորս պարտական ենք Կովկասի հերոս պաշտպաններին։ Ռուսները, ուկրաինացիները, բելոռուսները, ղազախները, վրացիները, ադրբեջանցիները, հայերը և մեր հայրենիքի եղբայրական մյուս ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք մտնում էին Հյուսիս-կովկասյան և Անդրկովկասյան ռազմաճակատների զորքերի կազմի մեջ, մահու կռիվ մղեցին ատելի ոսոխի դեմ և կրծքով պաշտպանեցին Սովետական Անդրկովկասը։

1942 թ. նոյեմբերի 19-ին, երբ թշնամին շարունակում էր Ստալինգրադի կատաղի գրոհը, սովետական զորքերն անցան վճռական հարձակման։ Հակառակորդի խմբավորումը, որի մեջ մտնում էր 22 դիվիզիա, կամ շուրջ 300 հա-

զար զինվոր ու սպա, ընկավ հսկայական աքցանի մեջ և մի քանի հաջորդական կործանիչ հարվածներից հետո լիովին ոչնչացվեց։ Վոլգայի մոտ տարած մեծ հաղթանակը Հայրենական պատերազմի և ողջ համաշխարհային պատերազմի ընթացքի արմատական բեկման սկիզբը դրեց։ Գերմանական ֆաշիզմի առաջ ծառացավ իր գործած ոճրագործության անխուսափելի հատուցման ահեղ ուրվականը։

Բայց մինչև ֆաշիստական Գերմանիայի լիակատար ջախջախումը մեր քաջարի զինված ուժերին վիճակված էր անցնել դեռ շատ կռիվների ու մարտերի միջով։ Եվ դրանցից առաջինը, Վոլգայի վրա մղած ճակատամարտից հետո, Կուրսկի աղեղի մոտ վարած մարտն էր։ Կուրսկի տակ տարած փայլուն հաղթանակը ավարտեց բեկումը Հայրենական պատերազմի ընթացքի մեջ և հնարավորություն տվեց կարմիր բանակին վիթխարի հարձակում ծավալել, որը շարունակվեց 1943 և 1944 թթ. ընթացքում սովետա-գերմանական ողջ ռազմաճակատում։

Այն բանից հետո միայն, երբ պարզ դարձավ, որ Սովետական Միությունը ի վիճակի է առանց դաշնակիցների օգնության ջախջախել ֆաշիզմը, Ամերիկայի Միացյալ Նահանգները և Անգլիան 1944 թ. հունիսի 6-ին բացեցին երկրորդ ճակատը։ Երկրորդ ճակատի բացումից հետո էլ սովետական զինված ուժերը շարունակում էին իրենց ուսերի վրա կրել պատերազմի հիմնական ծանրությունը։ Ամբողջովին ազատագրելով մեր հողը, կարմիր բանակը անզուսպ թափով թշնամուն քշեց դեպի արևմուտք։ Մտնելով Եվրոպայի՝ հիտլերականների կողմից օկուպացված երկրների տերիտորիան, նա օգնեց Ռումինիայի, Բուլգարիայի, Լեհաստանի, Հունգարիայի, Հարավսլավիայի, Չեխոսլովակիայի ժողովուրդներին թոթափել ատելի ֆաշիստական լուծը։

Պատերազմի ավարտական փուլում սովետական բանակը ցուցադրեց առանձնապես հոյակապ մարտական հատկություններ։ 1945 թ. իրենց թափով ու արդյունքներով վիթխարի ճակատամարտերի մեջ հատուկ տեղ է գրավում Բեռլինի օպերացիան՝ ամենախոշորներից մեկը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում։ Բեռլինի անկումը կարևոր դեր խաղաց գերմանա-ֆաշիստական մյուս խմբավորումների դեմ մղվող պայքարի ելքում։ Հիտլերյան Գերմանիան անվերապահ կապիտուլյացիայի ենթարկվեց, ռազմական, տնտեսական և բարոյա-քաղաքական լիակատար պարտություն կրելով։

Հաղթականորեն ավարտելով պատերազմը հիտլերյան Գերմանիայի դեմ, սովետական բանակն ու ռազմա-ծովային նավատորմը, դաշնակիցների զորքերի հետ համատեղ գործելով, 1945 թ. օգոստոսին ջախջախեցին միլիտարիստական Ճապոնիայի զինված ուժերը։ Ճապոնիայի պետական և զինվորական ներկայացուցիչները հարկադրված եղան անվերապահ կապիտուլյացիայի ակտ ստորագրել։

Հայրենական մեծ պատերազմը ցույց տվեց, որ սովետական հասարակական ու պետական կարգը հանդիսանում է ոչ միայն տնտեսական շինարարության, այլև պատերազմական շրջանում թշնամուն հակահարված տալու համար ժողովրդի բոլոր ուժերի մոբիլիզացման լավագույն ձևը։ Պատերազմը ցույց տվեց ոչ միայն սովետական պետության քաղաքական ու տնտեսական կարգի անառարկելի առավելությունները, այլև մարքս-լենինյան դաղափարախոսության՝ սովետական ժողովրդի այդ հոգևոր զենքի անպարտելի ուժը։

Հիտլերականները համոզված էին, որ իրենց հեշտությամբ կհաջողվի սեպ խրել ռուսների և Սովետական Միության մյուս ժողովուրդների միջև։ Այդ առնչակետից հետաքրքրական են Գերինգի «Կանաչ թղթապանակի» նյութերը։ «Մերձբալթյան երկրներում,—մատնանշվում էր օկուպացիոն զորամասերին ուղղված հրահանգներից մեկում,—հօգուտ Գերմանիայի շահերի օգտագործել հակասությունները լիտվացիների, էստոնացիների, լատիշների և ռուսների միջև... Հարավում ի նպաստ մեր շահերի օգտագործել հակասությունների հնարավոր առկայությունը ուկրաինացիների և վելիկոռուսների միջև... Կովկասում հօգուտ մեր շահերի օգտագործել հակասությունները բնիկների՝ վրացիների, հայերի, թաթարների և ռուսների միջև»։

Սակայն կյանքը խորտակեց ֆաշիստական ագրեսորների խարդախ հաշիվները։ Թշնամու ուժերից վեր էր սասանել սովետական ժողովուրդների բարեկամությունը, ժողովուրդներ, որոնք միասնական ընտանիքի պես դուրս եկան գերմանական ֆաշիզմի, գազանային նացիոնալիզմի նրա գաղափարախոսության ու գործելակերպի դեմ։ Սովետական Միության բոլոր ժողովուրդները միահամուռ ոտքի եկան հանուն հայրենիքի պաշտպանության, պատերազմը իրավացիորեն համարելով բոլոր աշխատավորների ընդհանուր գործը՝ առանց ազգության ու կրոնի խտրության։ Ատելի թշնամու դեմ մղված կատաղի պայքարում ուս-ուսի տված արիաբար մարտնչում էին ռուսն ու ուկրաինացին, բելոռուսն ու վրացին, հայն ու ադրբեջանցին։

Ալեքսանդր Մատրոսովի և Ապավեն Ռոստոմյանի, Գեորգի Մայսուրաձեի և Գերայ Ասադովի, Բրեստի ամրոցի պաշտպաններ սպա Գավրիլովի և կոմերիտական կազմակերպիչ Մաթևոսյանի, Կրասնոդոնի երիտգվարդիականներ Օլեգ Կոշևոյի և Ժորա Հարությունյանցի, աննկուն վրիժառու-պարտիզաններ Ֆյոդոր Պոլետաևի և Մկրտիչ Դաշտոյանի, Հենրիկ Զաքարյանի և Գեորգ Քոլոզյանի, հաղթանակի դրոշը ռայխստագի վրա կանգնեցրած Միխայիլ Եգորովի և Մելիտոն Կանտարիայի, հայտնի և անանուն շատ հերոսների սխրագործությունները հանուն մեր արդար գործի, կազմում են մեր հայրենիքի անթառամ մարտական փառքը, մեր երկրի բոլոր ժողովուրդների ազգային հպարտությունը։

Հայրենական մեծ պատերազմում ցուցաբերած արիության և հերոսության համար 7 միլիոնից ավելի մարտիկներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով, ավելի քան 11 հազար հոգի արժանացան Սովետական Միության հերոսի կոչման, որոնցից 104-ը՝ կրկնակի և երեքը՝ եռակի։

* * *

Հիտլերական դավթիչների դեմ մղած Հայրենական մեծ պատերազմը իսկապես համաժողովրդական էր։ Սովետական Միության ժողովուրդներից յուրաքանչյուրը ձգտում էր իր արժանի ավանդը մուծել թշնամուն ջախջախելու գործում, ճակատ ուղարկելով իր հարազատ զավակներին։

Մեր սովետական հայրենիքի ազատության և անկախության համար արժանի կերպով մարտնչել են նաև հայ ժողովրդի զավակները։ Պատերազմի դաժան տարիներին կազմակերպվեցին հայկական հինգ դիվիզիաներ, որոնց դրոշները պսակված են ռազմական շատ պարգևներով։ Հանրահայտ են Կար-

միր դրոշի, Կարմիր աստղի և Կուտուզովի շքանշանակիր 89-րդ Թամանյան հրաձգային դիվիզիայի ծառայությունները, դիվիզիա, որը փառաբանված գեներալ Նվեր Սաֆարյանի ղեկավարությամբ մարտական ուղի է անցել Կովկասի նախալեռներից մինչև Բեռլին։

1943 թ. սկզբին հայ ժողովրդի՝ ռազմաճակատի իր զավակներին ուղղված հայտնի նամակում ասված է. «Ոչ մի րոպե մի՛ մոռացեք, որ հիտլերյան արյունարբու բորենու դեմ մղվող պատերազմում վճռվում է Սովետական Միության բախտը, հայ ժողովրդի բախտը։ Բազմապատկե՛ք ձեր զենքի ուժը, էլ ավելի կոփեցե՛ք ձեր սրտերը։ Կանգ մի՛ առեք ոչ մի դժվարության առաջ, քարուքանդ արե՛ք ֆաշիստական ամրությունները, ոչնչացրե՛ք նրանց տեխնիկան ու կենդանի ուժը»։

Հայ ռազմիկները սրբորեն կատարեցին իրենց ժողովրդի, իրենց սոցիալիստական հայրենիքի պատվիրանը։

Պատերազմի տարիներին հռչակվեցին հայ ժողովրդի զավակներ, տաղանդավոր զորավարներ մարշալ Հ. Բաղրամյանը, նավատորմի ադմիրալ Ի. Իսակովը, ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովը (Արմենակ Խանֆերյան), գեներալներ Մ. Պարսեղովը, Ա. Կարապետյանը, Բ. Գալստյանը, Ս. Մարտիրոսյանը, Ն. Սաֆարյանը, Հ. Մարտիրոսյանը, Ա. Բաբաջանյանը, Ա. Ղազարյանը, Ն. Հովհաննիսյանը, Գ. Թումանյանը և ուրիշներ։

Թշնամուն ջախջախելու գործում մեծ ավանդ մուծեցին սովետական քաջարի պարտիզանները, որոնց թվում գործում էին բավական թվով մարտիկներ նաև մեր ռեսպուբլիկայից։ Ֆաշիզմի դեմ մղված պայքարում նրանք ցուցաբերեցին արիություն ու տոկունություն ինչպես Սովետական Միության ժամանակավորապես գրավված տերիտորիաներում, այնպես էլ հիտլերականների կողմից օկուպացված Եվրոպայի երկրներում։

Հայ ռազմիկների սխրագործությունները նշվել են կառավարական բարձր պարգևներով. նրանցից 96-ը արժանացել են Սովետական Միության հերոսի կոչման, 18-ը՝ Փառքի շքանշանի, 66.800 հոգի պարգևատրված են շքանշաններով ու մեդալներով։

Սովետական բանակի հռչակված զորամասերի ցուցակներում հավիտյան գրանցված են հայ ժողովրդի արժանի զավակների՝ Սովետական Միության կրկնակի հերոս Նելսոն Ստեփանյանի և Սովետական Միության հերոս Հունան Ավետիսյանի անունները։ Ա. Գոմորյանի արյունոտված պարտիական տոմսը այժմ պահպանվում է սովետական բանակի կենտրոնական թանգարանում, որպես անձնազոհության ու խիզախության նշան։

Ընդմիշտ կհիշվի մեր ժողովրդի հարազատ զավակ, գեներալ-մայոր, կոմունիստ Խրիստաֆոր Ալավերդյանի սխրագործությունը, որը ծանր վիրավորված վիճակում ընկնելով գերի, գեներալներ Դ. Մ. Կարբիշևի և Ի. Ս. Նիկիտինի հետ միասին գլխավորեց ռազմագերիների հակաֆաշիստական ընդհատակյա կազմակերպությունը Գամմելբուրգի ճամբարում։

Հայրենական պատերազմի ընթացքում առանձնապես մեծ ուժով հանդես եկավ բանակի ու ժողովրդի միասնությունը։ Մեր զորքերի և բազմաթիվ պարտիզանական զորամասերի ու ջոկատների զինված պայքարը ուներ ամուր նյութական հիմք և հենվում էր թիկունքի աշխատավորների հերոսական անձնվեր աշխատանքի վրա։ Բանվորների, կոլտնտեսականների ու մտավորա-

կանության աշխատանքային փառապանծ գործերը հետ չէին մնում զինվորների հերոսական գործերից։

Մեր ռեսպուբլիկայում ռազմական արտադրանքի անցան գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունները՝ Ալավերդու և Ղափանի մետաղաձուլական գործարանները, Կիրովի անվան գործարանը, Կիրովականի քիմիական կոմբինատը, Լենինականի մեխանիկական գործարանը և այլ ձեռնարկություններ։ Պատերազմի տարիներին ռեսպուբլիկայում գործարկվեցին տասնյակ խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ։ Ըրացվեցին արտադրանքի 300 նոր տեսակներ։ Անձնվիրաբար, ամբողջ եռանդով աշխատում էր նաև ռեսպուբլիկայի կոլտնտեսային գյուղացիությունը։ Եվ այս ամենը այն ժամանակ, երբ հիմնական բանվորական ուժը թիկունքում մեծ մասամբ կանայք էին։ Եթե 1941 թ. նրանք կազմում էին Հայաստանի արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների ու ծառայողների ընդհանուր թվի 37 տոկոսը, ապա արդեն 1942 թ. արտադրության մեջ կանանց տոկոսը հասավ 54,4-ի։

Բանվորների ու գյուղացիների հետ միասին գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ տարած հաղթանակի գործում իր արժանի ավանդը մուծեց նաև Սովետական Հայաստանի ինտելիգենցիան։

Պատերազմի առաջին իսկ օրվանից գիտնականները, գրողները, կոմպոզիտորները, նկարիչները, ուսուցիչները, բժիշկները վերակառուցեցին իրենց աշխատանքը, ծառայեցնելով այն ռազմաճակատին օգնելու նպատակին։ Մեր ռեսպուբլիկայի գիտնականների բարձր վաստակի մասին է խոսում այն նշանավոր փաստը, որ պատերազմի ամենաթեժ օրերին, 1943 թվականին, սովետական կառավարության որոշմամբ ստեղծվեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան։

Մեր գրողներն ու բանաստեղծները իրենց ստեղծագործություններում ցույց էին տալիս Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի ցուցաբերած հերոսությունը, նրա կայունությունն ու անսասանությունը, ներբողում էին մեր երկրի ժողովուրդների ինտերնացիոնալիզմն ու բարեկամությունը։ Սովետական Հայաստանի տասնյակ գրողներ զենքը ձեռքին անմիջականորեն մասնակցեցին պատերազմին, և նրանցից շատերը զոհեցին իրենց կյանքը հանուն սովետական հայրենիքի։ Անգնահատելի է նաև թիկունքում մնացած գրողների ներդրումը, որոնք իրենց գեղարվեստական խոսքով ոգեշնչում էին աշխատավորներին և կոչում նրանց մարտական ու աշխատանքային սխրագործությունների։

Սովետական Միության բոլոր ժողովուրդների, այդ թվում և Սովետական Հայաստանի աշխատավորների անձնվեր պայքարը ռազմաճակատում և թիկունքում, կարմիր բանակի շարքերում հայ ռազմիկների ու սպաների ցուցաբերած հերոսությունը ոգևորում էին արտասահմանյան երկրներում ապրող հայերին։ Սովետական Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները նամակով դիմեցին սփյուռքահայությանը՝ կոչ անելով ակտիվորեն մասնակցել ընդհանուր թշնամու՝ ֆաշիզմի դեմ մղվող պայքարին։

Ֆրանսիայում, ԱՄՆ-ում և Մերձավոր Արևելքի գրեթե բոլոր երկրներում Հայրենական մեծ պատերազմի առաջին իսկ օրերից սկիզբ առավ և. ի հակադրություն ռևակցիոն ուժերի, գնալով ընդարձակվեց սփյուռքահայության

հայրենասիրական-առաջադիմական շարժումը՝ հանուն Սովետական Միության պաշտպանության, ընդդեմ ֆաշիզմի։ Այդ շարժման կարևորագույն արդյունքներից մեկը հանդիսացավ այն, որ դդալի միջոցներ հավաքվեցին «Սասունցի Դավիթ» և գեներալ Բաղրամյանի անվան տանկային շարասյուներ ստեղծելու համար։

Սփյուռքահայության շատ ներկայացուցիչներ, զենքը ձեռքին, դաշնակիցների զորամասերում կռվում էին Հիտլերյան Գերմանիայի դեմ, ակտիվ կերպով մասնակցում ֆաշիզմի կողմից օկուպացված երկրների աշխատավորության դիմադրական շարժմանը։ Լայնորեն հայտնի է, օրինակ, ֆրանսիական դիմադրական շարժման ականավոր գործիչ Միսաք Մանուշյանի անունը։

* * *

Ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը բարենպաստ պայմաններ ստեղծեց Եվրոպայի և Ասիայի մի շարք երկրներում ռևոլյուցիայի հաղթանակի, համաշխարհային սոցիալիստական սիստեմի ստեղծման համար, որը հսկայական ազդեցություն ունի համաշխարհային քաղաքականության ու էկոնոմիկայի վրա, միջազգային հարաբերությունների վրա։ Սոցիալիստական լագերի ստեղծումը երկրորդ համաշխարհային պատերազմի գլխավոր արդյունքներից մեկն էր։

Երկրորդ համաշխարհային պատերազմի մյուս կարևոր արդյունքն էր ազգային-ազատագրական շարժման ծավալումը։ Սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծման հետ մեկտեղ, պատմական հսկայական նշանակություն ունեցավ գաղութարարության կործանումը և հետպատերազմյան տարիներին ավելի քան 60 անկախ պետությունների առաջացումը Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում։

Ինչքան ավելի երկար ժամանակ է անցնում 1945 թ. մայիսյան անմոռանալի օրերից, այնքան ավելի վեհորեն է հառնում մեր դեմ այն հաղթանակի համաշխարհային-պատմական նշանակությունը, որ տարավ սովետական ժողովուրդը Հիտլերյան Գերմանիայի դեմ մղված պայքարում։

Գերմանական ֆաշիզմի և նրա դաշնակիցների ջախջախման հետևանքով մի նոր ու խորը ճեղքվածք առաջացավ կապիտալիզմի սիստեմում։ Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրներ անվերադառնալիորեն բռնեցին սոցիալիզմի ուղին։

Անցած տարիները հանդիսացան սոցիալիստական երկրների արտադրողական ուժերի անշեղ վերելքի, տնտեսական հզորության ամրապնդման և միջազգային հեղինակության աճի մի ժամանակաշրջան։ Ներկայումս սոցիալիստական սիստեմը արտադրում է համաշխարհային արդյունաբերական արտադրանքի մեկ երրորդից ավելին։

Սոցիալիզմի անվիճելի առավելությունները, որ համոզիչ կերպով ապացուցվեցին Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտով, ինչպես և Սովետական Միության և մյուս սոցիալիստական երկրների տնտեսության ու կուլտուրայի հետագա ակնառու հաջողությունները հսկայական ազդեցություն են թողնում համաշխարհային քաղաքականության վրա, գաղութային ու կախյալ երկրների ժողովուրդների ազգային ինքնագիտակցության վրա։

Ֆաշիզմի ջախջախման 20-ամյակը Սովետական Միության ժողովուրդները դիմավորում են քաղաքական ու աշխատանքային չտեսնված վերելքի պայմաններում։ Անցած տարի խոշոր հաջողությունների հասան մեր երկրի արդյունաբերության աշխատողները։ Գերակատարվեց արդյունաբերական արտադրության պլանը։ Յոթնամյակի վեց տարվա ընթացքում պլանից դուրս Թողարկվել է 42 միլիարդ ռուբլու արժողության արդյունաբերական արտադրանք։ Փառավոր գործ կատարեցին գյուղատնտեսության աշխատավորները, երկրին տալով շատ ավելի հողագործական ու անասնաբուծական արտադրանք, քան նախորդ տարիներին։ Մեծ են ու անվիճելի Սովետական Միության նվաճումները տնտեսության, գիտության և կուլտուրայի զարգացման բնագավառում։ Մենք հպարտանալու շատ բան ունենք, շատ բան ունենք, որ կարող ենք վերհիշել ուրախությամբ և գոհունակությամբ։

Հայրենական մեծ պատերազմի պատմական դասերը խիստ ուսանելի են։ Պատերազմի փորձը վկայում է, որ պատմական զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների ընթացքը փոխելու ռեակցիոն ուժերի բոլոր փորձերը անխուսափելիորեն ավարտվում են այդ ուժերի պարտությամբ։

Սովետական մարդիկ, որ շատ թանկ գնով են նվաճել հաղթանակը, կենսականորեն շահագրգռված են, որ աշխարհում թագավորի խաղաղություն։ Կատարելով սովետական ժողովրդի կամքը, մեր պարտիան ու կառավարությունը հետևողականորեն իրականացնում են տարբեր սոցիալական սիստեմներ ունեցող պետությունների խաղաղ գոյակցության լենինյան քաղաքականությունը։ Երա հետ մեկտեղ մեր ժողովուրդը, մեր պարտիան իրենց հաշիվ են տալիս, որ քանի դեռ գոյություն ունի իմպերիալիզմը, կմնա նաև ագրեսիվ պատերազմների վտանգը։ Վ. Ի. Լենինը զգուշացնում էր, որ մեռնելով ու քայքայվելով, իմպերիալիզմը ի վիճակի է մարդկությանը պատճառել անհաշիվ դժբախտություններ։ Ահա թե ինչու Սովետական Միությունն ու մյուս սոցիալիստական երկրները չթուլացող զգոնություն են ցուցաբերում իմպերիալիզմի նկատմամբ, ամեն կերպ ամրապնդելով իրենց հզորությունն ու պաշտպանունակությունը։

Անցած պատերազմում Սովետական Միության տարած հաղթանակը մի հզոր նախազգուշացում է ագրեսորներին։ Ներկայումս ուժերի ռեալ փոխհարաբերությունը աշխարհում այնպիսին է, որ սոցիալիստական սիստեմը ի վիճակի է հետ մղել ագրեսորների ամեն մի հարձակում։

Նշելով մեծ հաղթանակի քսանամյակը, սովետական մարդիկ աչալրջորեն հետևում են իմպերիալիստների մեքենայություններին և իրենց բոլոր ուժերը նվիրում են սոցիալիստական հայրենիքի տնտեսական ու պաշտպանական հզորության հետագա ամրապնդմանը։

Սովետական Հայաստանի, ինչպես և մեր ամբողջ բազմազգ հայրենիքի, աշխատավորները իրենց ամենաառաջնահերթ պարտքն են համարում արդյունաբերության, շինարարության, գյուղատնտեսության տնտեսական ու գիտատեխնիկական մակարդակի հետագա բարձրացումը այն հաշվով, որպեսզի իրենց արժանավոր ավանդը ներդնեն կոմունիստական շինարարության նոր խնդիրների իրականացման գործում։ Մեր խնդիրն է բազմապատկել սովետական ժողովրդի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ծնված հերոսական տրադիցիաները, բազմապատկել դրանք տնտեսության, գիտության ու կուլտուրայի զարգացման համար մղվող ամենօրյա պայքարում։

Ի դեպ, Հայրենական մեծ պատերազմում սովետական ժողովրդի և նրա զինված ուժերի տարած հաղթանակի համաշխարհային պատմական նշանակությունը պրոպագանդելու, սովետական բանակի պարտիզանների հերոսական սխրագործությունները ցույց տալու նպատակով, Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեն և ռեսպուբլիկայի Մինիստրների սովետը որոշել են Երևանում, «Հաղթանակ» զբոսայգում, ստեղծել Հայրենական մեծ պատերազմի թանգարան, որը բացվելու է 1966 թ. մայիսի 9-ին։

Նշելով Հայրենական պատերազմում տարած հաղթանակի քսանամյակը, սովետական մարդիկ կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լենինյան կուրսով վստահորեն քայլում են առաջ և իրենց բոլոր ուժերը նվիրում են մեր երկրում կոմունիզմի հաղթանակի գործին։